



## ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ԹԱՐԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՎԱԾ ԿԱՐԱՆՏԻՆԻ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՊՐՈՑԱԶԱՍԱԿ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ Կանխելով COVID-19-ի Տարածումը TK-12 Դպրոցներում

Այս փաստաթուղթը ծնողներին և խնամակալներին տրամադրում է թարմացում, որը վերաբերում է Լոս Անջելեսի Շրջանի TK-12 դպրոցներում հասանելի կարանտինի նոր փոփոխված տարբերակին: Այդ տարբերակը հնարավորություն է տալիս դասարանում կամ դպրոցի մեկ այլ հատվածում COVID-19-ով վարակակրի հետ շփված երեխաներին շարունակել հաճախել դպրոց, եթե հետևում են որոշակի կանոնների: Երեխաներին դպրոցում COVID-19-ից պաշտպանելու այլ ծրագրերի և քայլերի վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության [Թարմացում Ծնողների համար. TK-12 Դպրոցներ](#) կայքէջը:

### Ահա՝ ինչ պետք է իմանան ծնողները նոր, փոփոխված կարանտինի մասին:

Սովորաբար, եթե չպատվաստված անձը ճանաչվել է COVID-19-ով վարակված որևէ անձի հետ «սերտ շփում ունեցած անձ՝ կոնտակտավոր», ապա այդ անձը պետք է տանը կարանտին պահպանի: Սերտ շփում ունեցած անձը՝ կոնտակտավորը, այն անձն է, որը կամ՝

- 24 ժամվա ընթացքում վարակված անձից գտնվել է մինչև 6 ոտնաչափ հեռավորության սահմաններում 15 րոպե կամ ավել կամ
- Անմիջական շփում է ունեցել վարակված անձի մարմնի հեղուկների հետ (օրինակ՝ հազացել կամ փոշտացել են իր ուղղությամբ, օգտվել են նույն բաժակից կամ սպասքից, համբուրվել են):

Այժմ դպրոցներն ունեն նոր տարբերակ, որը կոչվում է «փոփոխված կարանտին», որը թույլ է տալիս երեխաներին շարունակել դասարանային ուսուցումը սովորական դպրոցական ժամերին՝ միաժամանակ լինելով Հանրային Առողջության Պատասխանատուի Կարանտինի հրամանի ներքո: Այս նոր տարբերակը հիմնված է դպրոցում առաջին ամսվա ընթացքում Հանրային Առողջության Վարչության կողմից հավաքագրած տեղեկությունների ուսումնասիրության վրա, որը ցույց է տվել, որ կարանտին պահպանող շատ քիչ երեխաներ են ի վերջո վարակվում COVID-19-ով:

### Կան խիստ կանոններ, որոնց պետք է հետևեն դպրոցները, եթե ընտրում են փոփոխված կարանտինի տարբերակը:

1. Փոփոխված կարանտինի տարբերակը կարող է դիտարկվել միայն այն դեպքում, եթե վարակակրի հետ շփումը տեղի է ունեցել դպրոցում, որտեղ աշակերտները վերահսկվում են դպրոցի անձնակազմի կողմից (դասարան, դպրոցի տարածք, որտեղ ներկա է դպրոցի անձնակազմը, դպրոցական ավտոբուս):
2. Փոփոխված կարանտինը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե վարակակրի հետ շփված երեխան ախտանիշներ չունի: Անհրաժեշտ է ամեն օր հետևել ախտանիշներին, իսկ եթե ախտանիշներ առաջանան, երեխան չի կարող պահպանել փոփոխված կարանտին: Նա պետք է մնա տանը և հետևի հրահանգներին՝ ուղղված սերտ շփում ունեցած այն անձանց, որոնց մոտ առաջանում են [ախտանիշներ կարանտին պահպանելու ընթացքում](#):



3. Դպրոցը պետք է կարողանա հաստատել, որ և՛ վարակված երեխան, և՛ վարակակրի հետ սերտ շփում ունեցած երեխան սերտ շփման ողջ ընթացքում ճշգրիտ կերպով կրել են դիմակները:
4. Վարակակրի հետ շփված աշակերտը չի հանդիսանում դպրոցում բռնկման մաս: Բռնկում է համարվում, երբ վարակը տարածվում է դպրոցում 3 կամ ավել անձանցից կազմված խմբում 14-օրյա ժամանակահատվածում: Բռնկման ժամանակ վարակի տարածման վտանգը շատ ավելի մեծ է, ուստի վարակակրի հետ շփված աշակերտների կողմից փոփոխված կարանտին պահպանելը այնքան էլ անվտանգ չէ:
5. Դպրոցը վարակակրի սերտ շփում ունեցած անձանց չպետք է թույլատրի մասնակցել արտադասարանային աշխատանքներին: Փոփոխված կարանտինը նախատեսված է՝ թույլատրելու երեխաներին շարունակել ուսումը, սակայն այն չի ներառում սովորական դպրոցական ծրագրից դուրս այլ գործողություններ:
6. Երեխաները, որոնք գտնվում են փոփոխված կարանտին պահպանելու հրամանի ներքո, պետք է ամբողջ ժամանակ կրեն դիմակ դպրոցի տարածքում՝ բացառությամբ ուսուցիչ և խմելիս: Այդ ընթացքում նրանք պետք է բոլորից գտնվեն առնվազն 6 ոտնաչափ հեռու և ցանկալի է՝ բացօթյա տարածքում:
7. Երեխաները, որոնք գտնվում են փոփոխված կարանտին պահպանելու հրամանի ներքո, պետք է շաբաթական առնվազն երկու անգամ թեստավորվեն համապատասխան թեստով բժշկական հաստատությունում կամ թեստավորման հաստատված վայրում (տվյալ դեպքում տնային թեստը ընդունելի չէ): Թեստերից մեկը պետք է կատարվի վարակակրի հետ շփումից հետո հնարավորինս շուտ (Կարանտինում գտնվելու 1-ին կամ 2-րդ Օրը), երկրորդը պետք է կատարվի դրանից առնվազն 3 օր անց. լավագույն տարբերակը կլինի թեստավորվել 5-րդ Օրը կամ ավելի ուշ, որպեսզի թեստի բացասական արդյունքի դեպքում ձեր երեխան կարողանա դուրս գալ կարանտինից 7-րդ Օրվանից հետո (8-րդ Օրը):

Քանի որ COVID-19 վիրուսը երբեմն կարող է տարածվել 6 ոտնաչափի սահմաններից դուրս, հորդորվում է նաև, որ չպատվաստված երեխաները, որոնք վարակակրի հետ սերտ շփում ՉԵՆ ունեցել, սակայն վարակված անձի հետ գտնվել են նույն դասարանում կամ դպրոցական մեկ այլ խմբում, վարակակրի հետ վերջին շփումից հետո երկու շաբաթվա ընթացքում շաբաթական մեկ անգամ թեստավորվեն: Եթե դպրոցն ունի հնարավորություն թեստավորել անգամ պատվաստված անձանց, ապա առաջարկվում է, որ ամբողջովին պատվաստված անձինք, որոնք վարակակրի հետ սերտ շփում ՉԵՆ ունեցել, սակայն վարակված անձի հետ գտնվել են նույն դասարանում կամ դպրոցական մեկ այլ խմբում, նույնպես երկու շաբաթվա ընթացքում շաբաթական մեկ անգամ թեստավորվեն:

### **Ինչպե՞ս կարող են ծնողները օգնել փոփոխված կարանտինը դարձնել տարբերակ իրենց երեխայի դպրոցի համար**

- Հիշեք, որ փոփոխված կարանտինը տարբերակ է, որը դպրոցը կարող է որոշել թույլատրել: Ձեր երեխայի դպրոցը կարող է որոշել թույլատրել այդ տարբերակը միայն այն դեպքում, եթե վերևում թվարկված բոլոր պայմանները բավարարվում են:
- Սովորեցրեք ձեր երեխային դիմակ կրելու կարևորությունը և դիմակը ճիշտ կրելու ձևը: Այցելեք [ph.lacounty.gov/masks](http://ph.lacounty.gov/masks) կայքէջ՝ վարակի տարածումը կանխելու համար դիմակների արդյունավետ կիրառման վերաբերյալ տեղեկությունների համար:



**Թարմացում Դպրոցահասակ երեխաների Ծնողների Համար. Փոփոխված Կարանտինի Տարբերակ TK-12 Դպրոցներում**

---

- Եթե ձեր երեխային թույլատրվել է պահպանել փոփոխված կարանտին, հիշեք, որ նա դեռ գտնվում է [Հանրային Առողջության Վարչության՝ Արտակարգ Իրավիճակներում Կարանտին Պահպանելու Հրամանի](#) ներքո: Ձեր երեխան պետք է մշտապես գտնվի տանը, երբ դասարանային ուսուցման չի մասնակցում:
- Մասնակցեք թեստավորման պահանջների կատարմանը, եթե ձեր երեխան հաստատվում է որպես սերտ շփում ունեցած կամ դպրոցի տարածքում վարակակրի հետ շփված անձ:

Եվ եթե ցանկանում եք անել ավելին, կարող եք գրանցվել **Հանրային Առողջության Վարչության՝ Ծնող-Ներկայացուցիչների Ծրագրին**: Մենք տրամադրում ենք ուսուցում և վկայական այն ծնողներին, որոնք ցանկանում են սովորել COVID-19-ի մասին՝ ինչպես է այն տարածվում, դրա ազդեցությունը երեխաների առողջության վրա, և այն ուղիները, որոնցով մենք բոլորս կարող ենք աշխատել տարածումը կանխելու համար: Դուք կմիանաք առաջնորդ-ծնողների հիմնալի խմբին, որոնք օգնում են կիսվել COVID-19-ի մասին փաստերով ամբողջ դպրոցական համայնքի հետ:

Ավելին իմանալու համար ուղարկեք հաղորդագրություն [hետևյալ էլ. հասցեին՝ TK12Ambassador@ph.lacounty.gov](mailto:TK12Ambassador@ph.lacounty.gov)

**Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք COVID-19-ի Աղբյուրները Ծնողների և Խնամակալների Համար [կայքէջը](#):**

